http://www.profikon.am
https://www.facebook.com/profikon.am/

Համարը N 139-Ն
Տեսակը Հիմնական
Տիպը Որոշում
Կարգավիճակը Գործում է
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2016.03.02/16(1196) Հոդ.152
Ընդունման վայրը Երևան
Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ընդունման ամսաթիվը 18.02.2016
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվը 23.02.2016
Վավերացնող մարմինը
Վավերացման ամսաթիվը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 12.03.2016
Ուժը կորցնելու ամսաթիվը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 փետրվարի 2016 թվականի N 139-Ն

«ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ՝ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ», «ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ՝ ՆԵՐՔԻՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐՈՎ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ «ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ՝ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԱՐՏԱՀԱՆՎՈՂ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N 239 ԵՎ 2000 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի N 895 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 194-րդ, 201-րդ և 209-րդ հոդվածների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Սահմանել՝

1) «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծվող որոշ ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի նվազագույն չափաքանակները՝ համաձայն N 1 հավելվածի.

2) «Վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգով արտահանվող որոշ ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի նվազագույն չափաքանակները՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մարտի 27-ի «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի նվազագույն քանակության սահմանման կարգը և «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների և մնացորդների նվազագույն քանակության սահմանման կարգը հաստատելու մասին» N 239 և 2000 թվականի դեկտեմբերի 31-ի «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով նախատեսված «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված և «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի նվազագույն քանակություն սահմանող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ապրանքների ծագման երկրի որոշումն իրականացնող լիազորված մարմնի մասին» N 895 որոշումները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Հ. Աբրահամյան**

2016 թ. փետրվարի 23
Երևան

http://www.profikon.am
https://www.facebook.com/profikon.am/

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2016 թվականի
փետրվարի 18-ի N 139-Ն որոշման

«ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ՝ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ» ԵՎ «ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ՝ ՆԵՐՔԻՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐՈՎ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ

1. Սույն հավելվածի դրույթներով կարգավորվում են «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծվող որոշ ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների ու կորուստների քանակությունը սահմանելու հետ կապված հարաբերությունները՝ բացառությամբ մշակութային արժեքների:

2. Սույն հավելվածի իմաստով «որոշ ապրանքներ» են համարվում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված իրավասու մարմինների կողմից սահմանված վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի ստանդարտ չափաքանակներ ունեցող ապրանքներից տարբերվող ապրանքները:

3. «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծվող որոշ ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի նվազագույն չափաքանակ (ելքի նորման) այն քանակն է, որը գոյանում է ըստ արտադրական պրոցեսի վերամշակման համար ներմուծվող որոշակի քանակությամբ օտարերկրյա ապրանքների վերամշակման արդյունքում՝ բնաիրային կամ արժեքային չափի միավորներով կամ տոկոսային արտահայտությամբ:

4. «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծվող օտարերկրյա ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք թափոնների ու մնացորդների չափաքանակն այն քանակությունն է, որը գոյանում է արտադրական պրոցեսի արդյունքում և սույն հավելվածի 3-րդ կետում նշված վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի նվազագույն չափաքանակ չի համարվում:

5. Մնացորդ է համարվում սույն հավելվածի 4-րդ կետով սահմանված՝ վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի նվազագույն չափաքանակ չհանդիսացող՝ վերամշակումից գոյացած հումքի և նյութերի այն քանակությունը, որը դասվում է հումքի, նյութերի հետ նույն ԱՏԳ ԱԱ-ի ծածկագրին և չի կորցրել իր սկզբնական սպառողական հատկությունները:

6. Թափոն է համարվում վերամշակումից գոյացած հումքի, նյութերի այն քանակությունը, որը դասվում է հումքի, նյութերի հետ նույն ԱՏԳ ԱԱ ծածկագրին, կորցրել է իր սկզբնական սպառողական հատկությունները և հնարավոր չէ օգտագործել որպես հումք՝ նմանատիպ կամ այլ արտադրական պրոցեսում:

7. Կորուստ է համարվում ապրանքների վերամշակման արտադրական գործընթացի արդյունքում գոյացած և (կամ) չվերականգնվող (անվերադարձելի) հումքի, նյութերի այն քանակությունը, որը կորցրել է իր սկզբնական հատկությունները: Կորուստ են համարվում նաև բնական կորուստները:

8. Ապրանքներ ներմուծող անձը (այսուհետ՝ հայտատու) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով Մաքսային տարածքում ապրանքների վերամշակման կամ ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվություններ (այսուհետ՝ թույլտվություն) ստանալու համար Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն (այսուհետ՝ լիազոր մարմին) է ներկայացնում «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծվող ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների չափաքանակների հաշվարկը՝ համաձայն սույն հավելվածի ձևի, որը հաշվարկվում է հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

1) պատվիրատուի և վերամշակողի (արտադրողի) միջև ստորագրված պայմանագրով ամրագրված վերամշակման նվազագույն արդյունքի և (կամ) վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների չափաքանակով.

2) վերամշակողի (արտադրողի) կողմից տվյալ արտադրանքի արտադրության համար հաստատված ազգային կամ միջազգային ստանդարտների, տեխնիկական փաստաթղթերի կամ միջպետական ԳՈՍՏ-երի (ГОСТ-երի) պահանջներին համապատասխան հաշվարկված վերամշակման նվազագույն արդյունքի և (կամ) վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների չափաքանակով.

3) գիտահետազոտական կազմակերպությունների կազմում գտնվող փորձարկման լաբորատորիաների կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հավատարմագրված փորձարկման լաբորատորիաների (այսուհետ՝ լաբորատորիա) կողմից հաստատված վերամշակման նվազագույն արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների չափաքանակով:

9. Մինչ թույլտվություն ստանալու նպատակով լիազոր մարմին դիմելը՝ հայտատուն իրավունք ունի դիմելու լաբորատորիաներ՝ վերամշակման նվազագույն արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների չափաքանակների հաստատման նպատակով, ու վերջինիս կողմից հաստատված չափաքանակները բավարար հիմք են մաքսային մարմնի համար: Թույլտվություն ստանալու համար հայտատուի կողմից ներկայացված հաշվարկի ուսումնասիրության նպատակով, անհրաժեշտության դեպքում, վերադաս մաքսային մարմինը կարող է ներգրավել սույն հավելվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետում նշված լաբորատորիայի ներկայացուցիչներին:

10. Վերամշակման արդյունքի նվազագույն չափաքանակը հաշվարկելիս հաշվի են առնվում նաև վերամշակման ընթացքում առաջացող թափոնների, մնացորդների և արտադրական կորուստների քանակությունները:

11. Հայտատուն Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր ներկայացրած փաստաթղթերի և տեղեկությունների ամբողջականության և արժանահավատության համար:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Դ. Հարությունյան**

ՀԱՇՎԱՐԿ

«ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ՝ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ» ԵՎ «ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ՝ ՆԵՐՔԻՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐՈՎ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՍՏԱՑՎԵԼԻՔ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ԳՈՅԱՑԱԾ ԹԱՓՈՆՆԵՐԻ, ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ԵՎ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԻ

N N ը/կ	Վերամշակման համար ներմուծվող օտարերկրյա ապրանքները				Վերամշակման արդյունքը				Վերամշակման արդյունքում գոյացած															
									թափոնները					կորուստները						մնացորդները				
														բնական			արտադրական							
	անվանումը	ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳ ԱԱ-ի	քանակությունը	մաքսային արժեքը	անվանումը	ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳ ԱԱ-ի	քանակությունը	մաքսային արժեքը	անվանումը	ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳ ԱԱ-ի	քանակությունը	մաքսային արժեքը	մաքսային ընթացակարգի ծածկագիրը	անվանումը	ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳ ԱԱ-ի	քանակությունը	անվանումը	ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳ ԱԱ-ի	քանակությունը	անվանումը	ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳ ԱԱ-ի	քանակությունը	մաքսային արժեքը	մաքսային ընթացակարգի ծածկագիրը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25

Սույն հաշվարկի 5-րդ, 9-րդ, 13-րդ և 24-րդ սյուներում նշված «մաքսային արժեքը» որոշվում է հայտարարագրման փուլում:

Դիմող _____ _____
(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

_____ _____ 20____թ.

http://www.profikon.am
https://www.facebook.com/profikon.am/

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2016 թվականի
փետրվարի 18-ի N 139-Ն որոշման

«ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ՝ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԱՐՏԱՀԱՆՎՈՂ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐ

1. Սույն հավելվածի դրույթներով կարգավորվում են «Վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգով արտահանվող որոշ ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի նվազագույն չափաքանակները սահմանելու հետ կապված հարաբերությունները՝ բացառությամբ մշակութային արժեքների:

2. Սույն հավելվածի իմաստով «որոշ ապրանքներ» են համարվում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված իրավասու մարմինների կողմից սահմանված վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի ստանդարտ չափաքանակներ ունեցող ապրանքներից տարբերվող ապրանքները:

3. «Վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգով արտահանվող ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի նվազագույն չափաքանակը (ելքի նորմա) այն քանակն է, որը գոյանում է ըստ արտադրական պրոցեսի վերամշակման համար արտահանվող որոշակի քանակության մաքսային միության ապրանքների վերամշակման արդյունքում՝ բնաիրային կամ արժեքային չափման միավորներով կամ տոկոսային արտահայտությամբ:

4. Ապրանքներ արտահանող անձը (այսուհետ՝ հայտատու) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվություն (այսուհետ՝ թույլտվություն) ստանալու համար Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն (այսուհետ՝ լիազոր մարմին) է ներկայացնում «Վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգով արտահանվող մաքսային միության ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի նվազագույն չափաքանակների հաշվարկը՝ համաձայն սույն հավելվածի ձևի, որը հաշվարկվում է հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

1) պատվիրատուի և վերամշակողի (կատարողի) միջև ստորագրված պայմանագրով որոշված վերամշակման նվազագույն արդյունքի չափաքանակով.

2) վերամշակողի (կատարողի) կողմից հաստատված վերամշակման նվազագույն արդյունքի չափաքանակով:

5. Մինչ թույլտվություն ստանալու նպատակով լիազոր մարմին դիմելը՝ հայտատուն իրավունք ունի դիմելու լաբորատորիաներ՝ վերամշակման նվազագույն արդյունքի հաստատման նպատակով, և վերջինիս կողմից հաստատված չափաքանակները բավարար հիմք են մաքսային մարմնի համար: Թույլտվություն ստանալու համար հայտատուի կողմից ներկայացված հաշվարկի ուսումնասիրության նպատակով, անհրաժեշտության դեպքում, վերադաս մաքսային մարմինը կարող է ներգրավել Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N 139-Ն որոշման N 1 հավելվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետում նշված լաբորատորիայի ներկայացուցիչներին:

6. Հայտատուն Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր ներկայացրած փաստաթղթերի և տեղեկությունների ամբողջականության ու արժանահավատության համար:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար Դ. Հարությունյան

http://www.profikon.am
https://www.facebook.com/profikon.am/

ՁԵ

ՀԱՇՎԱՐԿ

«ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ՝ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԱՐՏԱՀԱՆՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՍՏԱՑՎԵԼԻՔ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԻ

N Ն/Կ	Վերամշակման համար արտահանվող ապրանքները				Վերամշակման արդյունքը			
	անվանումը	ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳ ԱԱ-ի	քանակությունը	մաքսային արժեքը	անվանումը	ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳ ԱԱ-ի	քանակությունը	մաքսային արժեքը
1	2	3	4	5	6	7	8	9

Սույն հաշվարկի 5-րդ և 9-րդ սյունակներում նշված «մաքսային արժեքը» որոշվում է հայտարարագրման փուլում:

Դիմող _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը, հայրանունը)

_____ _____ 20____թ.